



Նշեք ձեր օրացույցը՝

Դպրոց Քայլելու Միջազգային Օր Է

Հարգելի Ծնողներ,

Հաճույքով հայտարարում ենք, որ մեր դպրոցը մասնակցում է Դպրոց Քայլելու Միջազգային Օրվան _____: Սա մի պարզ միջոցառում է. ուսանողները, ծնողները, խնամակալները և դպրոցի անձնակազմը դպրոց կքայլեն այս թվականին:

Այս օրը քայլելով՝ դուք կօգնեք, որ խորանա գիտակցությունը այն մասին, _____:

- ✓ Երեխաներին սովորացնել անվտանգ երթևեկության ունակությունը:
- ✓ Չափահասներին հիշեցնել, որ հարկավոր է անվտանգ քշել դպրոցի շրջակայքում:
- ✓ Ստեղծել և պահպանել երեխաների համար անվտանգ վայրեր, որպեսզի քայլեն հատկապես դպրոց գնալուց և վերադառնալուց:
- ✓ Գտնել միջոցառումներ, որոնց կարող ենք դիմել՝ մեր համայնքը ավելի բարեացակամ դարձնելու համար քայլողների հանդեպ:
- ✓ Զարկ տալ այն իրողության, որ երեխաները կարիքն ունեն կանոնավոր ֆիզիկական գործունեության, որպեսզի մնան հզոր և առողջ:
- ✓ Քաջալերել, որ ընտանիքները զվարճանան և ժամանակ անցկացնեն միասնաբար քայլելով: Սա առողջ մնալու հեշտ եղանակ է:

Եկեք բոլորս քայլենք միասին՝ մեր համայնքը դարձնելու համար երեխաների հանդեպ ավելի բարեացակամ վայր, որպեսզի քայլեն: Դուք կարող եք օգնել՝ ձեր երեխաների հետ դպրոց քայլելով _____

Հարգանքով,

Եթե ցանկանում եք օգնել այս միջոցառմանը և քայլել, խնդրում ենք զանգահարել՝ ներքևում ցանկագրված ձեր տեղի ներկայացուցիչի հետ:

Եթե դուք և/կամ ձեր երեխաներն արդեն կանոնավոր կերպով քայլում եք տան և դպրոցի միջև, այս միջոցառումը շնորհակալ կլինի ձեզ պարզապես վարվելու համար և կքաջալերի, որ ձեր երեխաները շարունակեն քայլել անվտանգ:

Եթե ձեր երեխան կամ երեխաները դպրոց չեն քայլում, կամ հաճախ չեն քայլում, այս միջոցառումը կօգնի, որ ավելի լավ ծանոթանաք ձեր տան և դպրոցի միջև ընկած ճանապարհին: Կարող եք միասին գրուցել վտանգների, - նաև լավ բաների, - մասին, որ ընկած են ձեր երեխաների ճանապարհին:

Եթե դպրոցից հեռու եք բնակվում կամ վտանգ կա ձեր տան և դպրոցի միջև, ձեր ուղևորությունը բաժանեք երկուսի: Նախ քշեք կամ ավտոբուս նստեք մինչև որոշ կետ: Այնուհետև մնացած հատվածն անցեք քայլելով ձեր երեխաների հետ: Ձեր երեխայի հետ դպրոց քայլելով շատ բան կարող եք սովորել:

Armenian